

# ARCHIVE COPY

Please return.



Հրատարակություն Ամերիկահայոց Արեւելեան Թեմի Ազգային Առաջնորդարանի  
A Publication of the Prelacy of the Armenian Apostolic Church of America

Volume XVII, Number 10 — April 1995

## Karekin I Enthroned Supreme Patriarch & Catholicos of All Armenians



*With the Bishops of the Armenian Church at his side, His Holiness delivers his message to the faithful.*

On Palm Sunday, April 9, His Holiness Karekin II of the Great House of Cilicia, was enthroned as the Supreme Patriarch and Catholicos of All Armenians in St. Illuminator Cathedral of the Mother See of Etchmiadzin. Since there has been no other Catholicos of All Armenians with the name Karekin, His Holiness will be known as Karekin I. The enthronement was the culmination of a series of meetings that began a week before when the National Ecclesiastical Assembly met to elect a new Catholicos. Serving on the altar during the Palm Sunday services were His Beatitude Archbishop Torkom Manoogian, Patriarch of Jerusalem and His Beatitude Archbishop Karekin Kazanjian, Patriarch of Constantinople. Also serving on the altar were Archbishop Khajag Barsamian, Primate of the Eastern Diocese of the United States and Archbishop Karekin Nersisian, Primate of the Ararat Diocese of Armenia.

Archbishop Mesrob Ashjian, who was scheduled to attend as one of two delegates from the Cilician See, was unable to attend because of an extended period of recuperation. [See Archbishop Ashjian article on page 2]. More than 50 archbishops and bishops participated as well as many vartabeds and priests, representatives of sister denominations, and high level government officials including the President of Armenia, Levon Ter Petrosyan.

In a moving sermon, His Holiness thanked God and prayed for strength. Noting the historic and unique significance of this patriarchal election and enthronement, His Holiness called for the revitalization of the Armenian Church saying:

"The Armenian Apostolic Church, which has entrusted me with the office of its first servant, is summoned—at this decisive transition in our modern history—to an imperative mission of salvation. Led by the fundamental teachings of a historical legacy established by

God and transmitted through Christ, it is called upon to pour into the life of our people new, clean, and abundant water from the fountain of the Holy Gospels and the sacred tradition of our fathers.... We have a wonderful opportunity presented to us: the 1700th anniversary of the Christianization of Armenia, and of the official foundation of our Church. I have said elsewhere that it is necessary that this occasion be celebrated as a new Pentecost in the life of our people, both in the fatherland and in the diaspora. It must become a movement of renewal for the benefit of our people, and in the service of God and humankind...."

Many people in attendance were interested in the vestments worn by His Holiness. The Miter worn by the Catholicos for this occasion is originally from Constantinople from the 19th century. The Chasuble—the long, sleeveless vestment worn over the alb—was commissioned by Father Vertanes in 1807 and presented as a gift to the Catholicate of Etchmiadzin. Father Vertanes was legate from the Holy See to the churches of India, which was then under the jurisdiction of the Diocese of New Julfa, one of the major centers of the Armenian Church. Father Vertanes was in compliance with the making of the Chasuble in China. It is made of fine Chinese silk with embroidery and depicts the conversion of Armenia to Christianity, King Dertad, Sts. Hripsime and Gayane, the Cathedral of Etchmiadzin, Mount Ararat and a pelican which is the symbol of sacrifice. This vestment has been used for consecration or enthronement ceremonies since the consecration of Kevork IV in 1866. It is not worn on any other occasion and is kept in the old Veharar of the Holy See of Etchmiadzin.

### ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Կաթողիկոսական ձեռնադրությունն ու օծումը ըստ էության պատուոյ, յարգանքի եւ պերճութեան նշաններ են աւելի, քան թէ ուրիշ մէկ նոր աստիճան շնորհելու առիթ: Որովհետեւ Քրիստոնէական Եկեղեցին, իր հիմնադրութենէն ի վեր, քահանայութեան երեք աստիճաններ ունէր միայն—սարկաւագութիւն, երիցութիւն եւ եպիսկոպոսութիւն: Եպիսկոպոսութենէն վեր աստիճան չկար եւ սակայն, ժամանակի ընթացքին, հետզհետէ ստեղծուեցան Եպիսկոպոսապետի կամ Կաթողիկոսի գահակալութեան առիթով ձեռնադրութեան եւ օծման կարգեր, առաւել շքեղութեան եւ խորհուրդի համար:

Հայ Եկեղեցւոյ մէջ ալ, կաթողիկոսական եւ օծման կարգը հետզհետէ ստացաւ զօրաւոր աւանդութեան մը կնիքը: Առաջին ձեռնադրութեան կարգը, որուն կ'ակնարկէ Անանիա Մոկացի, կորսուած է եւ մեր տրամադրութեան ներքեւ կը գտնուի միայն Ս. Ներսէս Լամբրոնացիի խմբագրած եւ զարդարած կաթողիկոսական ձեռնադրութեան կարգը, որուն ձեռագիր օրինակները կը գտնուին Սոյն Մայր Մաշտոցին մէջ (1311-էն առաջ), ինչպէս նաեւ Ղալաթիոյ Ազգային Մատենադարանին եւ Վենետիկեան երկու գրչագրերու մէջ: Լամբրոնացի սակայն չունի օծման կարգը, որ աւելի ուշ մուտք գործած է, եւ գուցէ Կիլիկեան թագաւորութեան անկումէն յետոյ լիովին որդեգրուած եւ տարածուած: Իսկապէս ալ թագ ու մական կորսնցուցած եւ արքայական ծիրանիէն մերկացած մեր ժողովուրդին համար ինչքան քաղցր է Կաթողիկոսական օծման մէջ տեսնել վերջասնանց յուշքը մեր անցեալի փառքին եւ

Ռուբէնի Տան յանրձեռնութեան:

Մեր ակնարկած Լամբրոնացի Կաթողիկոսօրհնէքը վերջին անգամ վերախմբագրուած եւ հրատարակուած է Գեորգ Գ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմէ, 1876 թուին, եւ ա՛յդ կանոնին հետեւողութեամբ է որ տեղի ունեցած էր Գարեգին Բ. Աթոռակից Կաթողիկոսի ձեռնադրութիւնը եւ օծումը, 1977 Մայիս 29-ին, Անթիլիասի մէջ:

Ուստի, քանի Գարեգի Կաթողիկոս իբրեւ Աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսական օծում ստացած էր, բնական է, որ հարկ չըլլար, որ կաթողիկոսը դարձեալ օծում ստանայ այս անգամ իբրեւ Ամենայն Հայոց Հայրապետ: Հետեւաբար Ապրիլ 9, 1995 թուին Ս. Էջմիածնայ Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ Գարեգին Ա. Կաթողիկոսի գահակալութեան հանդիսութիւնը միայն առանց օծումի եւ առանց հայրապետական քօրի տուչութեան: Բայց վստահաբար, օրուան որոշ խորհուրդ մը տալու եւ նաեւ աւելի եւս իմաստաւորելու համար օրը գահակալութեան հանդիսութեան ընթացքին տեղի ունեցաւ փոքրիկ արարողութիւն մը, որու ընթացքին Գարեգին Ա. Կաթողիկոս կատարեց իր ուխտը, որմէ յետոյ կարդացուեցաւ «Աստուածային եւ Երկնաւոր» աղօթքը եւ տեղի ունեցաւ յատուկ աղօթք մասնակցութեամբ պատրիարքներու եւ 12 արքեպիսկոպոսներու: Արդարեւ, այդ օր Ս. Էջմիածնայ Մայր Տաճարին բեմին վրայ էին Երուսաղէմի պատրիարք եւ կաթողիկոսական տեղապահ Թորոնս Արքեպիսկոպոս, Թուրքիոյ հայոց պատրիարք Գարեգին Արքեպիսկոպոս, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողի-

## From Hromkla to Etchmiadzin

by Archbishop Mesrob Ashjian

On Palm Sunday, April 17, 1166, the Catholicate of Hromkla\* resounded with joy. Taking place that day was the enthronement of the successor to the longest reigning Pontiff, Catholicos Krikor III Pahlavouni. Having served for 53 years, Krikor invited the delegates to the National Ecclesiastical Assembly in Hromkla for the purpose of electing his successor, who was to be none other than his brother, Nerses Glayetzi, later known as St. Nerses the Gracious (Shnorhali). Catholicos Krikor Pahlavouni had several times attempted to convince his brother to accept the Pontificate, but Nerses had each time declined. As he himself would say in his sermon delivered on the day of his enthronement, "First and foremost the reason for our reluctance was not due to the princely will of Krikor, but because of our weakness and our own feeling of spiritual poverty." Thus, on that Palm Sunday morning, Nerses Glayetzi, succeeded his blood brother and spiritual father. (Shnorhali, Nerses Catholicos, General Papers, Jerusalem, 1871, page 270).

Now, 829 years later—again on the morning of Palm Sunday—the gracious Pontiff, Karekin II, ascended to the throne of the Holy See of Etchmiadzin. Without doubt, the spirit of Catholicos Vazgen I—another long-reigning Catholicos—was present and his heart was content, we believe, seeing that his spiritual younger brother, Catholicos Karekin of Cilicia, succeeded him to the throne of the Illuminator. Perhaps, this was his secret wish, which is now a reality, that Catholicos Karekin, whom he looked upon as a brother and son, be the next Catholicos of All Armenians. After many centuries, our Church has repeated an inspiring pontifical succession which share a great many similarities.

It is our heartfelt wish that our modern day Shnorhali, Karekin II of Cilicia—now Karekin I of Etchmiadzin—will be able to accomplish the expectations which surround him, as he has done in his previous service.

Perhaps for many it is a little too complex and profound to understand the historical significance of events. However, in this case, how plain it is to see the significance of the enthronement of Catholicos Karekin, who for more than 40 years has taught Armenian history to his students; who has provided inspiration from the pages of Armenian Church history. No other individual has as much understanding of history and the ability to interpret its meaning and significance. On this basis it is possible to understand why on March 29 when Catholicos Karekin left the Cilician monastery in Antelias, Lebanon, he first offered canonical prayers in the Cathedral, then solitary prayers in the Chapel dedicated to the Martyrs, and finally he prayed at the tombs of the Cilician Pontiffs...knowing he was departing from them...tying his life to Holy Etchmiadzin.

It is not usual for a Catholicos to be invited to occupy another Catholicossal throne. If we wish, we can truly consider this event to be unique: in peaceful conditions, a Catholicos leaves his Pontifical See and is given the honor of occupying another Catholicossal See. Of course, it is possible to find precedents in the past. For example, Zacharia of Aghtamar, who in the 1450s forcibly seized the See of Etchmiadzin from Krikor Jalalbegian. We can site another



\*Hromkla was a fortress on the banks of the Euphrates which was purchased by the Pahlavouni family from the Crusaders and converted to the Catholicossal See in 1149. The Catholicos of All Armenians remained there until 1293 when the See was moved to the capital city of Sis.

unique personage in the history of the Armenian Church who succeeded in being elected Patriarch of Jerusalem in 1649, Patriarch of Constantinople in 1651, then succeeded in being consecrated in Aleppo Catholicos of the Armenians who were Ottoman subjects by Khatchadour of Sis in 1664 and in 1682, the religious community of Etchmiadzin in a praiseworthy spirit of national unity invited Yeghiazar of Aintab to Etchmiadzin. However, regardless of these, the election of Karekin I Sarkissian is truly unprecedented and it is natural that we are faced with many questions when we try to analyze the historical implications.

The election of Karekin Catholicos will be received by some as the supreme triumph of Etchmiadzin over harsh fate. As we know, Holy Etchmiadzin, which came to be the center of the Armenian Church as a result of the vision of St. Gregory the Illuminator, very quickly lost this position and, according to accepted opinion, since the year 484 relinquished its position to several political centers. First in Greater Armenia, Dvin, then Ani, Arkina, Aghtamar, and finally moving toward the new center of Armenian life, Dzamntav, Hromkla, and Sis.

In this period a movement began to return the Catholicate of All Armenians to historical Armenia. Without going into greater detail, we shall say that this movement crystallized in 1441 when in Vagharshapat, with the participation of more than 300 religious and lay delegates, an election of a new Catholicos took place, while the Catholicos of All Armenians, Krikor VIII Mousabegian was living in Cilicia. It is a riddle of history on what basis the election of a new Catholicos took place in Vagharshapat. Was Krikor VIII invited to return to Holy Etchmiadzin, and refused suggesting that a new Catholicos be elected there? Some authorities in the 18th century suggested that it was so and the Catholicos said "I will remain here and die and after my death the See of Sis will cease to exist of its own accord." We do not know and perhaps we will never know the exact circumstances. However, the point is that while the

legitimate Catholicos remained in Cilicia a new Catholicos was elected in Etchmiadzin, which became known as the Mother See and its occupant the Supreme Armenian Patriarch and Catholicos of All Armenians. The Cilician See thereafter lost its brilliance and glory and in 1915 it suffered the same fate of its exiled people until 1930 when it found refuge in Antelias. The Catholicos who served in Antelias include: Sahag II, who fled from Sis; Papken I who was coadjutor to Catholicos Sahag; Bedros I; Karekin I; Zareh I; Khoren I, and his coadjutor and successor, Karekin II Sarkissian.

Now, 554 years after Krikor Mousabegian's "refusal," it is the Cilician Catholicos who is elected as the Catholicos of All Armenians. It is because of this that we said above that this is Holy Etchmiadzin's final victory, and yes a victory for Armenian history, because it was on our mother soil that the concept of one nation and one national ideal became reality. This is a point of view which should have been upheld by those who during the last month boasted that they love Etchmiadzin more than Etchmiadzin! Alas, in their spiritual blindness, they were unable to proclaim this to be a beautiful chapter in our history, and see in the return of Karekin II to Armenia the victory of Holy Etchmiadzin.

There are other people who quickly took advantage of the circumstances to advocate the elimination of the Cilician See or to reduce it to a Patriarchate. This sentiment was first expressed in the late 1980s in Toronto during an important meeting of the AGBU leadership when that organization's Honorary Life President and national benefactor, Mr. Alex Manougian, suggested that Catholicos Karekin II could be considered as a coadjutor or successor to Catholicos Vazgen I with the understanding that a new Catholicos would not be elected in Antelias, and thus the See would be eliminated. The advocates of this approach forget that the Cilician See was not created by Karekin II, so that by the invitation of Etchmiadzin a schism would end. This idea continued to circulate, especially after March 8, 1995, when the concept of Karekin II becoming Catholicos of All Armenians began to be seriously considered. There are others, very dear individuals, who have decided to fight to see that a successor to Karekin II in Antelias is not elected, and to be satisfied with a *locum tenens* until such time that Cilicia's fate is decided. Similarly, some people think that a Catholicos should be elected in Antelias only if agreed to be subordinate to the Mother See. These people do not realize that these suggestions resolve nothing and in fact create more problems for both Etchmiadzin and Cilicia. History is patient and waits for its day and its victory. We are certain that in the coming years there will come a day when we will have one Pontiff. But this is going to happen in a slow, natural way and with good spirit, and



When Catholicos Karekin left the Cilician Monastery, he first offered canonical prayers at the Cathedral of St. Gregory (right) and then silent prayers in the Chapel dedicated to the martyrs (left).

not by dissolving a centuries-old institution in a reckless and divisive way. In the final analysis the fate of a See cannot be left to any one individual, whoever he may be or whatever moral and spiritual weight he may carry.

As far as we can see, the Cilician See lost its gracious Pontiff, but for the greater benefit of our nation and church. Now a *locum tenens* must be elected in Cilicia and in all likelihood before too long, possibly by October, a successor to Karekin II will be elected. A successor, who we believe, will work and serve in the spirit of one nation, one fatherland, and one church. [Editor's note: Archbishop Ardavast Terterian was elected *locum tenens* on April 19 and the elections for a new Catholicos of the Great House of Cilicia is scheduled to take place the end of June.]

But, now let us together rejoice in the election of the Catholicos of All Armenians. Let us extend our love and respect to the most qualified spiritual leader of our time, who enriched with God-given graces of mind, heart, and spirit, now occupies the throne of Holy Etchmiadzin in independent Armenia.

The love and the excitement of the people can be heard all over Armenia and convinces us that Karekin I is the man of the time and hour who will lead us in new directions, the first being to make the 1700th anniversary of Armenia's Christianity into a new Illuminator who will reunite the Armenian nation to Christianity and make the Armenian Church faithful to her baptism.

And in this climate of expectations, how appropriate are the words in the Old Testament when for the salvation of his people, Mordecai says to Queen Esther, "...and who knoweth whether thou art come to the kingdom for such a time as this?" (Esther, 4:14).

Due to circumstances I am far away from our Fatherland and Holy Etchmiadzin. But on the morning of this glorious Palm Sunday I united with those in the Cathedral of Holy Etchmiadzin and with the thousands of faithful there, prayed for Catholicos Karekin I and for a happy and successful pontificate. And who knows, perhaps, at the exit from the Cathedral when the white doves of love and peace flew toward the Gate of Dertad, to the Veharan, to the Lake of Nerses, to the Khrimian Observatory, and beyond the boundaries to Ararat, Western Armenia, and Cilicia, were heard from the lips of the multitude the poignant words of Giligia:

*When the doors of hope open...  
May I once more see my Giligia.*

In a beautiful show of unity let us join together the worlds of Armenia, Artsakah, and Giligia—as one nation, one people—filled with idealistic vision and the bright faith of St. Gregory the Illuminator.

### OUTREACH

A publication of the Armenian Apostolic Church of America  
138 East 39th Street, New York, NY 10016  
Telephone: (212) 689-7810 Fax: (212) 689-7168

Archbishop Mesrob Ashjian, Prelate

Iris Papazian, Editor

Mardirous Minas-Haftvani, Business Manager

OUTREACH (USPS 426-490) is published monthly, with the exception of a combined June-July-August issue, by the Prelacy of the Armenian Apostolic Church of America. Unsolicited manuscripts are welcome; please include a stamped, self-addressed return envelope. Signed articles do not necessarily reflect the policy of the Armenian Apostolic Church of America. Send all correspondence to the above address to the attention of the Editor.

Printed in the United States of America. Second class postage paid at New York, NY 10016.

Postmaster: Send address changes to OUTREACH, 138 E. 39th Street, New York, NY 10016

ISSN: 10643087

### ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԱՀԱՎԱԼՈՒԹԻՒՆ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ (Անձնական յուշագրություն)

Ուրբաթ, 31 Մարտ 1995, առաօտ կանուխ, Փարիզի վրայով հասանք Երևան: Արմինեյն Էրայնզ օդանավը լեցուն էր աշխարհացրի հայությունը ներկայացնող եկեղեցական եւ աշխարհական պատգամաւորներով, որոնք Հայաստան կը մեկնէին մասնակցելու համար Ազգային-Եկեղեցական Ժողովին (Ապրիլ 3-9) եւ յանուն մեր ժողովուրդի զաւակներուն, ընտրելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 131-րդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Յաջորդ շաբաթը անկիւնադարձային նշանակութիւն ունենալու սահմանում էր մեր ազգային-եկեղեցական պատմութեան մէջ: 17 Օգոստոս 1994-ին, Երանաշնորհ Տ.Տ. Վազգէն Ա. Հայրապետի վախճանումով շուրջ քառասուն տարիներու կաթողիկոսական իշխանութիւն մը իր լրումին կը հասներ ու 4 Ապրիլ 1995-ին հայրապետական թափուր գահը պիտի ունենար իր արժանընտիր գահակալը՝ յանձինս Մեծի Տանն Կիլիկիոյ Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին:

Ինձի համար հոգեդարձային բնոյթ ունեցող այցելութիւն մըն էր դէպի Հայաստան կատարած ճամբորդութիւնս, որ շեշտաւորում էր կաթողիկոսական ընտրութեան պատմակերտ մթնոլորտով: Եզակի ներկայութիւն մըն էի այդ օրերուն եւ բախտաւոր կը զգամ այն պատեհութեան համար որ տրուեցաւ ինձի ներկայ գտնուելու կաթողիկոսական ընտրութեան եւ գահակալութեան եւ ականատեսի սա անպաճոյճ տողերը բաժնելու ձեզի հետ: Առանց զգացական կեղծ գունաւորում մը տալու, կ'ուզեմ ընդգծել թէ ես այնպէս զգացի որ հայրենիք վերադարձող մասնիկ մըն էի եւ ոչ թէ պարզ այցելու մը: Զանազան ճամբորդութիւններ աշխարհի տարբեր-տարբեր անկիւնները տարած են զիս եւ միշտ ունեցած եմ այն տպաւորութիւնը թէ այդ հողին ու մարդոց չեմ պատկանիր. իսկ, հոս, Հայաստանի մէջ, երբ ամէն բան հայկականութիւն կը բուրբէր՝ ո՛չ պատգամաւորի պարտաւորութիւններ եւ ոչ ալ «թորիս»-ի հոգեբանութիւնը կը պարտէին զիս, միայն հայրենիքը վայելելու եւ, յետոյ, հայրենիքը հոգիս մէջ լուռ կերպով ծրարած հետս տանելու հոգեվիճակը տիրական էր մէջս: Այդ իսկ պատճառաւ ալ չոր ու ցամաք նկարագրական մը չէ որ պիտի փոխանցեմ ձեզի. այլ, դէպքերու շարանին մէջէն բռնած պահերս պիտի բաժնեմ ձեզի հետ՝ այնպէս ինչպէս որ անոնք յանախեցին ինձի եւ դրոշմուեցան հոգիս վրայ:

Ուրբաթ, առաօտեան ժամը 10ին, Ս. Էջմիածին եմ արդէն եւ որդիաբար կը համբուրեմ Գարեգին Վեհափառ Հօր աջը: Վեհափառը հանդարտ կը թուի ըլլալ ու իր մէջ արդէն իսկ կը տեսնեմ կամրջումը Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հայրապետական գոյգ Աթոռներուն՝ պատմութեան սա ճակատագրական հանգրուանին վրայ: Կ'անդրադառնամ, թէ հայ մամուլին մէջ լոյս տեսած այնքա՛ն անիմաստ եւ անտեղի յօդուածներ փոխանակ պահուան ու առիթին պատմական լրջութիւնը փոխանցելու մեր ժողովուրդին, մանր-մունր եւ ծայրայեղ վերլուծումներու թիրախ դարձուցին կաթողիկոսական ընտրութիւնն ու թեկնածուներու հարցը: Ու ահա պարզ իրականութիւնը.- քանի մը օրէն պիտի յստականայ ամէն բան եւ ազատ ու անկախ Հայաստանի մէջ, ժողովրդավարական սկզբունքներով, պիտի կատարուի նոր կաթողիկոսի ընտրութիւնը: Պիտի մնայ միայն ու միայն արժանաւորագոյն ընտրելին, որ հովուապետական բարձրագոյն ու շնորհալից պատասխանատուութեամբ պիտի հովուէ իր «բանաւոր հօտ»ը: Ափսո՛ս այն մեղանին որ յումպէտս թափուեցաւ կաթողիկոսական ընտրութիւնը կանխող ժամանակահատուածը ելեքտրականացնելու սին ակնկալութիւններով: Վեհափառը կը հարցնէ Թեմիս բարեջան Առաջնորդ Մեսրոպ Արք. Աշճեանի



Clerical and lay delegates to the National Ecclesiastical Assembly in Etchmiadzin.

առողջապահական վիճակին մասին: Սրբազանը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատգամաւորներէն էր եւ ծրագրուած էր որ Սրբազան Հօր հետ հասնէինք Հայաստան. սակայն, վերջին պահուն, բժիշկներ արգիլած էին Սրբազան Հօր ճամբորդութիւնը: Կ'ապահովցնեմ Վեհափառը թէ Սրբազանը հանգիստ է եւ շատ հաւանաբար գալ Ծաբաթ հասնի Հայաստան: Աւելի ուշ, երբ պիտի հանդիպէի այլ հոգեւորական ու աշխարհական պատգամաւորներու եւ Ամերիկայէ ժամանած հիւրերու պիտի անդրադառնայի որ ոչ միայն Վեհափառ Հօր, այլ նաեւ շատ-շատերու փափաքն էր այս օրերուն Ս. Էջմիածնի մէջ տեսնել Մեսրոպ Սրբազանը՝ որ ի վերջոյ չկրցաւ գոնէ գահակալութեան ներկայ գտնուիլ:

Ծաբաթ օր յատկացուցի քանի մը վաճառքային այցելութեան: Գացի Սեւանայ Լիճ եւ հոն, Սեւանի Դպրեվանքին մէջ, տեսայ թէ ինչպէս շուրջ յիսուն նուիրեալ երիտասարդներ կը պատրաստուին եկեղեցական ասպարէզը ընդգրկելու եւ ծառայելու Աստուծոյ ու հայ եկեղեցիին: Կարճ խօսակցութիւն մը ունեցայ Արտակ Սարկաւազին հետ եւ հարցուցի.- «Ուսման արտօնին ի՞նչ պիտի ըլլաս».- «Քահանայ», պատասխանեց.- «Եւ ո՛ր կը փափաքիս ծառայել», ըսի.- «Գիտի մը մէջ. չեմ ուզում Հայաստանից հեռանալ. հոս մեզ շատ կարիք ունեն», հաստատեց: Հիանալի ու նախանձելի ոգի մը, որ երբ տարածում գտնէ եւ մեր հոգեւորական դասուն հաւատամբը դառնայ ո՛չ մէկ օտար հոսանք կը համարձակի աղաւաղել մեր հայ քրիստոնեայի ինքնութիւնը: Ու կը հաւատամ, որ նորընտիր Վեհափառը այս մարդակերտումի առաքելութեան ամէնէն ճարտար մէկ ներկայացուցիչը պիտի ըլլայ՝ վկայ իր Կիլիկեան Դպրեվանքէն ներս ունեցած դերակատարութիւնը:

Նոյն օրը գացի մինչեւ Դիլիճան, Հաղարծին ու Գօշավանք: Ծամբան կանգ առինք եւ առիթը ունեցայ շփուելու գիւղացի հայորդիներու հետ: Հարցուցի հայրիկի մը -- «Գիտե՞ս թէ երկուշաբթի նոր կաթողիկոս պիտի ընտրուի Ս. Էջմիածնի մէջ».- «Ո՞նց չգիտեմ», պատասխանեց.- «Ո՞ւմ ուզում ես կաթողիկոս», շարունակեցի.- «Էլ ում», ըսաւ, «Կիլիկիայի Գարեգինին. Կաթողիկոս ունենք էլ»: Զարմացայ, որ մինչեւ իսկ Հայաստանի այս բարձունքին վրայ մարդիկ այնքան ինքնավստահօրէն Գարեգին Բ. Կաթողիկոսը կ'ուզեն: «Զայն բազմաց, ձայն Աստուծոյ»:

Կիրակի օր, դարձեալ այցելեցի Վեհափառ Հօր եւ գացի Ս. Էջմիածնի անմիջական շրջապատին մէջ կառուցուած Ս. Հովհիսիմէի, Ս. Գայանէի եւ Ս. Ծողակաթի եկեղեցիները: Փշուր-փշուր հետեւեցայ Ս. Պատարագին, աղօթեցի, մտմ վառեցի եւ զրուցեցի Էջմիածնի մամիկի մը հետ, որ յայտնեց թէ խումբ մը կիներով «երեք օր պաս ենք բռնել» Գարեգին Կաթողիկոսի ընտրութեան համար ու կասկած չունի որ Աստուած պիտի ընդունի իրենց ուխտն ու աղօթքը: Անբացատրելի զգացում մը շերտացուց հոգիս. ի՞նչ անմեղ հաւատք, որ պիտի ծաղկի մեր հողին վրայ եւ ներթափանցէ մեր նոր սերունդի երակներուն մէջ:

Յետ միջօրէին ուղեւորուեցայ Խոր Վիրապ: Տայտորիչ եւ սրտանմլիկ տեսարան մը պարզուեցաւ աչքերուս դիմաց, երբ տեսայ փշալարերու ետին վեհօրէն կանգնած Արարատը եւ մայր Արաքսը: Ու փա՛ռք տուի Աստուծոյ, որ կարելի չէ բանտել հաւատքը, կարելի չէ մարել լուսաւորչեան կանթերը:

Երկուշաբթի, յետ սուրբ պատարագի եւ Տ.Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի հոգւոյն խաղաղութեան համար կատարուած հոգեհանգիստին, բացուեցաւ Ազգային-Եկեղեցական ժողովը: Ժողովական կեանքը չէ խօսած սրտիս. այս մէկն ալ տարբեր չէր միս ընթացիկ ժողովներէն՝ իր սկզբնական փուլերուն մէջ.- ներկայ-բացակայի ստուգում, դիւանի ընտրութիւն, եւայլն: Սակայն, ժողովին բացումը յատկանշուեցաւ պետութիւն եւ եկեղեցի հիանալի գործակցութեան ու սրտակցութեան արտացոլացումով, երբ Հայաստանի Նախագահն ու պետական արագանին Վեհափառ Հօր ու գոյգ Պատրիարքներուն հետ դահլիճ մուտք գործեցին: Խօսք առին Թորգոմ Պատրիարք, վսեմաշուք Նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան եւ Գարեգին Վեհափառ: Նախագահն ու Վեհափառը շեշտեցին այն սրբազան կոչումը որ տրուած է ժողովականներուն Հայ Եկեղեցւոյ վճռադրոշմ այս խաչմերուկին վրայ՝ խղճմտօրէն եւ համահայկական միասնականութեան հրամայականէն մեկնած կատարելու նոր կաթողիկոսի ընտրութիւնը: Նախագահին ճառը անգամ մը ես կը համոզւեմ զիս թէ պարզ անձնական նախասիրութեան մը մեկնած չէր որ ան Գարեգին Վեհափառը արժանաւորագոյն թեկնածուն կը նկատէր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան. այլ, գիտակցօրէն եւ պատասխանատուութեամբ կը կատարէր այս հաստատումը՝ ի շահ Հայ Եկեղեցւոյ, հայրենիքին եւ համայն հայութեան: Որքա՛ն իմաստալից կը դառնային Էջմիածնի խճուղիին վրայ



Armenia's President, Levon Ter-Petrosyan, congratulates the new Catholicos of All Armenians.



Robert Kocharian, President of Karabagh, offers his congratulations to Karekin I.



Representatives from many church denominations from around the world were in attendance.

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ շար. էջ 3-էն

ծածանող պատահարներն մեկուս սա բառերը--«Մեկ ազգ, մեկ հայրենիք, մեկ եկեղեցի»:

Երեքշաբթի, 4 Ապրիլ 1995: Այս օրը եկա զիս համոզելու թե ինչ կը գնահատեմ երկա՞ր օր մը ապրիլ: Օր մը, որ մեր ազգային-եկեղեցական տարեգրությանն մէջ անջնջելի պիտի մնայ որպէս օղակաւորմը մեր 20-րդ դարու այն իրադարձութեանց որոնք փոթորկեցին մեր հաւաքական կեանքը-- Ղարաբաղեան շարժում, Հայաստանի անկախութիւն, երաշարժ եւ, ահա, ընտրութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Ժողովի առաջին նիստը ընդգրկեց կաթողիկոսական տեղապահ եւ Երուսաղէմի Պատրիարք Ամենապատիւ Ս. Թորգոմ Արք. Մանուկեանի վեցամսեայ գործունէութեան հաշուառութիւնը: Ապա, ժողովական աշխատանքները փոխադրուեցան Մայր Տաճար: Ժողովը ի նիստ հրաւիրուեցաւ ատենապետ Տարիէլ Բարսեղեանի կողմէ: Ներկայ 398 պատգամատուրներ քուէարկեցին հետեւեալ ութ թեկնածուներէն երեքին -- Գարեգին Բ. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Գարեգին Արք. Ներսիսեան (Արարատեան Թեմ), Պարգեւ Եպս. Մարտիրոսեան (Արցախի Թեմ), Տիրան Արք. Կիրեղեան (Ռուսաստանի եւ Նոր Նախիջեանի Թեմ), Գրիգորիս Արք. Բուհարեան (Ծիրակի Թեմ), Զաւէն Արք. Զինչիեան (Եգիպտոսի Թեմ), Արիս Եպս. Ծիրվանեան (Հիւս. Ամերիկայի Արեւմտեան Թեմ), Կիրեղ Եպս. Գաբրիէան (Երուսաղէմի Պատրիարքութիւն): Քուէարկութեան երկրորդ փուլին անցան Գարեգին Կաթողիկոս, Գարեգին Արքեպիսկոպոս եւ Պարգեւ Եպիսկոպոս: Ատենապետը յայտարարեց թէ որովհետեւ թեկնածուներէն ոչ մէկը յաջողած էր ապահովել քուէներու կէսէն մեկ անկէն, ընտրութեան երրորդ փուլը տեղի պիտի ունենայ յաջորդ առաւօտ: Մինչ այդ, Գարեգին Արք. Ներսիսեան յայտարարեց թէ կը բաշէ իր թեկնածութիւնը եւ կը շնորհաւորէ Գարեգին Կաթողիկոսի Ամենայն Հայոց Հայրապետ ընտրութիւնը: Ժողովականները ծափահարութեամբ ընդունեցին առաջարկը եւ սկսան ղօղանջել Ս. Էջմիածնի զանգերը՝ անտելով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութիւնը: Նորընտիր Վեհափառը համբուրեց իջման Ա. Սեղանը եւ իր հայրական անդրանիկ խօսքը ուղղեց ժողովականներուն, Ս. Էջմիածնի բակը խոնուած հաւատացեալներուն եւ համայն հայ ժողովուրդին, բնաբան անկելով Սաղմոսերգունի «Տուր գորութիւն ծառայի քո, կեցր գորդի աղախնոյ քո եւ արա առ իս ճշան բարութեան» (Սաղմ. ԺԵ. 16) խորհմաստ բառերը: Ապա, Վեհափառի դահլիճին մէջ ընդունեց նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի եւ պետական վարչաձեռնայի անդամներուն, ժողովականներուն եւ հայ ժողովուրդի զաւակներուն աջահամբուրը ու շնորհատրութիւնները: 30 Մարտին, Երեւանի օդակայանին մէջ, կաթողիկոսական ընտրութեան արդիւնքին մասին թղթակցներուն ուղղած հարցումին Վեհափառը պատասխանած էր-- «Աստուած ինչ որ կամի, այդ կը լինի»: Ու ահա, Աստուած Գարեգին Կաթողիկոսը կը կոչէր Ամենայն Հայոց Հայրապետութեան...:

Չորեքշաբթի օր, նորընտիր Հայրապետի նախագահութեամբ եւ փակման խօսքով արարեցաւ Ազգային-Եկեղեցական Ժողովը: Ապա, Վեհափառ Հայրապետը, Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի անդամներուն ընկերակցութեամբ իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանին եւ անգամ մը եւս հատատեց թէ եկեղեցի ու պետութիւն համագործակցաբար պիտի աշխատին հայ ժողովուրդի բարիքին համար: Ապա, անպաշտօն կերպով, անցաւ Երեւանի «Ազատութեան Հրապարակ»ը եւ իր հայրապետական օրհնութիւնը բաշխեց ու ողջունի խօսքը ուղղեց ժողովուրդին: Նոյն իրիկունը, Էջմիածին քաղաքի ժողովուրդը սրտբաց հիւրասիրութեամբ պատուեց Վեհափառը եւ արտայայտեց իր ուրախութիւնը ի տես ազգընտիր նոր հայրապետին:

Մինչեւ Կիրակի Վեհափառը ընդունեց շնորհատրական այցելութիւնները հայ եւ օտար եկեղեցական պետերու կամ անոնց ներկայացուցիչներուն, որոնք աշխարհի չորս ծագերէն Ս. Էջմիածին կը ժամանէին խնդակցելու համար Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ զաւակներու հրճուանքին: Միաժամանակ, Վեհափառը հարցազրոյցներ ունեցաւ հայ եւ օտար լրատուական ընկերութիւններ ներկայացնող շուրջ 200 թղթակցներու հետ: Ս. Էջմիածինը մեղուափեթակ էր դարձած: Ամէն շրթունքէ բարեմաղթութիւն մը կը լսուէր Գարեգին Ա. Վեհափառ Հօր հասցէին ու մտերու բոցին եւ խունկի ծուխին հետ կը բարձրաձայն առ Աստուած: Ականջիս մէջ մինչեւ այսօր տակաւին կ'արձագանգեն թաքսիի վարորդ հաւատացեալ Հրաչիկին սա բառերը--«Աստուած պահի մեր նոր կաթողիկոսին: Ես ամէն Կիրակի Ս. Սարգիս կը գնամ: Հիմա անկի պիտի աղօթեմ Գարեգին Կաթողիկոսի համար»:

Ծաբաթ օր, հիր կրօնատուներն ու հոգեւորական եւ աշխարհական պատգամատուրները Վեհափառ Հօր գլխաւորութեամբ այցելեցին Ծիծեռնակաբերդի Ապրիլեան Յուշակոթողը եւ հոգեհանգիստով ու ծաղկեպսակի գետեղմամբ հաւաքաբար յարգեցին մեր մէկ ու կէս միլիոն նահատակներու յիշատակը՝ Մեծ Էղեռնի 80-ամեակի առթիւ:

Կիրակի, 9 Ապրիլ 1995, Ծաղկազարդը աննախընթաց շքեղութիւն մը զգեցած էր Ս. Էջմիածնի մէջ: «Օրհնեալ որ գայ յանուն Տեառն»ը կը պատշաճէր նաեւ նորընտիր Կաթողիկոսին: Առաւօտեան ժամը 10:30-ին դպիրներու, սարկաւազներու եւ հոգեւորականներու թափօրը ծայր առաւ վեհարանէն եւ պատարագիչ Վեհափառ Հայրապետը առաջնորդեց Մայր Տաճար, ուր միայն մասնաւոր հրաւիրեալներ կրցած էին մտնել. մինչ, բարեպաշտ ժողովուրդը բակին մէջ կարգապահօրէն կը հետեւէր սուրբ պատարագին: «Ողջուն»էն առաջ, Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս արտասանեց իր «Ուխտ»ը եւ Թորգոմ ու Գարեգին Պատրիարքներէն ստացաւ հայրապետական ասան ու մատանին: Խորհրդանշականօրէն աշխարհի հինգ ցամաքամասերու հայութիւնը ներկայացնող 12 արքեպիսկոպոսներու եւ եպիսկոպոսներու մասնակցութեամբ ու աղօթքներով կատարուած գահակալութիւնը արարեցաւ Վեհափառ Հօր բաշխած առաջին «ողջուն»ով եւ հայրապետական քարոզով: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ խորան բարձրացաւ Կաթողիկոսական Փոխանորդ Գերշ. Ս. Արտաւազդ Արք. Թրթռեան. արարողութեան ներկայ էին նաեւ Կիլիկեան Միաբանութեան անդամներ Ս. Տաթև Արք. Սարգիսեան, Ս. Սուրէն Արք. Գաթարոյեան (պատգամատուր), Ս. Եփրեմ Արք. Թապագեան, Ս. Կոմիտաս Եպս. Օհանեան եւ Ս. Նարեկ Վրդ. Ալեքսէզեան. նաեւ, Հիւս. Ամերիկայէն Ս. Մեսրոպ Աւ. Քհլ. Թաշճեան, Ազգային Վարչութեան Ատենապետ Տիար Օճնիկ Մարաշեան ու ազնուափայլ տիկինը, եւ 20 զոյգ հիրեր: Հոն էին նաեւ Կիլիկեան Աթոռի Ազգային Կեդրոնական Վարչութեան ատենապետ Մեթր Խաչիկ Պապիկեան (պատգամատուր) եւ փոխ-ատենապետ Տիար Ռակէթրան Արզումանեան: Ի՞նչ հոգեպարար ու Քրիստոսի Եկեղեցւոյ անքակտելի միութիւնը ցոյցանող երեսոյք էր տեսնել զանազան յարանուանութեանց պատկանող հոգեւորականներուն խորան բարձրանալը եւ Վեհափառ Հօր հետ սիրոյ համբոյր փոխանակելը: Ապա, Վեհափառի դահլիճին մէջ, Վեհափառը ընդունեց Հայաստանի եւ Արցախի հանրապետութեան նախագահներուն Լեւոն Տէր Պետրոսեանի ու Ռուպերթ Քոչարեանի եւ պետական այլ դէմքերու, պաշտօնական հրաւիրեալներու եւ հաւատացեալներու աջահամբուրը ու շնորհատրութիւնները:

Նոյն օրը կէսօրէ ետք ժամը 4-ին, Երեւանի մարզական համալիրին մէջ տեղի ունեցաւ նշակերտ մը, որուն ներկայ գտնուեցան 1500 հրաւիրեալներ: Զանազան պատմութիւններ շնորհատրական խօսքեր արտասանեցին եւ նուէրներ յանձնեցին Ամենայն Հայոց Հայրապետին: Հայաստանի նախագահը, Հայաստանի Հանրապետութեան անցազիրը պաշտօնապէս յանձնելով, Վեհափառ Հօր Հայաստանի քաղաքացիութիւն շնորհեց: Վեհափառ Հօր փակման խօսքէն առաջ, երգուեցաւ «Կիլիկիա»ն: Վեհափառին շատ պարզ ու միաժամանակ յատկանշական սա պատգամով իր լրումին հասաւ տօնախմբութիւնը-- «Վերջացած է խօսքի ժամը եւ սկսած է գործի պահը»:

Գիշերուան ժամը 8-ին, միաբանակից այլ եղբայրներու հետ գացինք Ս. Էջմիածին եւ ստացանք Վեհափառ Հօր օրհնութիւնը եւ «բարի ճանապարհ»ի բարեմաղթութիւնը: Խառն մտածումներով ու զգացումներով բաժնուեցայ Վեհափառէն: Ահաւասիկ, ետիս կը մնար արեւայտեցէ մինչեւ կաթողիկոսութիւն 43 տարիներու ամբողջ կեանք մը որ ի սպաս դրուած էր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու այսօր կ'ընծայուէր մէկ ու նոյն եկեղեցւոյ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան նուիրական ճանապարհով: Ի՞նչ ծով կարիքներ ու բիւրաւոր ակնկալութիւններ կը խնդնէ նոր Վեհափառին կեանքը. ու ի՞նչ դիպուկ կը հնչեն մաղթերգին բառերը-- «Երկա՛ր կեանք տուր հայրապետին, երկա՛ր օրեր հայոց հօր»:

Երկուշաբթի առաւօտ կանուխ օդակայանէն եմք արդէն. Երեւան-Փարիզ: Կէսօրէ ետք, ժամը 3-ին, օդանաւը կ'իջնէ Նիւ Եորքի Քենեթի օդակայանը ու երկար ճամբորդութենէ մը ետք կը վերադառնամ առաքելութեան դաշտս՝ սօսնելու համար Աւագ Ծաբաթն ու Տիրոջ Ս. Յարութիւնը: Օդանաւին մէջ, հաճելի էր խօսակից ունենալ Ամերիկածին հայորդի մը, որ Ֆլորիտայէն Ս. Էջմիածին եկած էր մի միայն կաթողիկոսական գահակալութեան ներկայ ըլլալու եւ այդ ձեւով շնորհակալութիւն յայտնելու Վեհափառին, որ իր Նիւ Եորքի առաջնորդութեան օրերուն սուրբ պատարագի սարկաւազի բաժինները սորվեցուցած էր իրեն: «Տորէն պիտի գամ Հայաստան. այս անգամ կ'ընջու եւ զաւակներուս հետ: Հիմա, Նիւ Եորքէն Գենեթիքը պիտի երթամ եւ այս գիշեր ամէն բան մայրիկիս պիտի պատմեմ: Ֆլորիտայի մէջ այս բաներու մասին մեկու մը հետ չեմ կրնար խօսիլ. մէկը չկայ: Գոնէ այսօր մայրիկիս հետ քիչ մը հայերէն խօսիմ»:

Հաւատքի եւ հայրենասիրութեան այլ տիպի զգացում մը, որ այս օտար ափերուն վրայ առկայծ մնալու համար Վեհափառ Հայրապետի օրհնութեան ու խնամքին կարիքն ունի...:

Նարեկ Վրդ. Ալեքսէզեան

**ԳԱՐԵԳԻՆ Ա. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒԽՏԸ ԻՐ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՕՐԸ**  
9 Ապրիլ 1995  
Ս. Էջմիածին

«Գարեգին ծառայ Քրիստոսի եւ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, այժմ եղեալ միաբան Սրբոյ Ուխտիս Էջմիածնի, կամօքն Աստուծոյ, եւ ընտրութեամբ համօրէն ազգիս Հայոց կոչեցեալ յԱրարատեան Աթոռ Կաթողիկոսութեան Ամենայն Հայոց, ապաւինեալ յօգնականութիւն շնորհացն Բարձրելոյն՝ խոստանամ եւ ուխտեմ առաջի սրբոյ սեղանոյս եւ աստուածընկալ Ս. Նշանացս, յանձն առնուլ զպաշտօնս զայս Եպիսկոպոսապետութեան Հայաստանեայց եկեղեցւոյ եւ բոլորապատու գործնաց եւ կաթողիկոսական պարտոց եւ առաջնորդել ազգիս Հայոց ըստ ուղղափառ վարդապետութեան Քրիստոնէական կրօնից, ըստ մերոյ եկեղեցւոյ դաւանութեան եւ ըստ հայրապետական կարգաց եւ կանոնաց Աստուածաշարժութեան, անստերիւր եւ անխտոր ընթանալով յամենայնի ընդ լուսաշարիղ հետս գնացից արժանաժամանգ յաջորդաց սրբոցն առաքելոցն Թադէոսի եւ Բարդուղիմէոսի եւ սրբոյն Հօրն մերոյ Գրիգորի երկրորդ Լուսաւորչի, զգուշաւոր պահպանութեամբ իրաւանց Մայր Աթոռոյս Հայաստանեայցս»: Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ շար. էջ 1-էն  
կոսութեանէն Արտաւազդ Արք. Թրթռեան: Զոյգ առընթերակալները Արարատեան Թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին Արք. Ներսէսեան եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու առաջնորդ Խաժակ Արք. Պարսամեան, Մայր Աթոռի դիւանապետ Ներսէս Արք. Պօզապալեան, Վրաստանի թեմի առաջնորդ Գեորգ Արք. Մերայտարեան, Արցախի Առաջնորդ Պարգեւ Եպս. Մարտիրոսեան, Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն Աստղիկ Եպս. Արիստակէսեան, Ծիրակի թեմի առաջնորդ Գրիգորիս Արք. Բունեաթեան եւ աշխարհի հինգ ցամաքամասերէն Ափրիկէէն Զաւէն Արք. Զինչիեան, Եւրոպայէն Գիւտ Արք. Նաքթաշեան, Ովկանիայէն Ադան Արք. Պալիոզեան, Հարաւային Ամերիկայէն Գիսակ Արք. Մուրատեան, Հիւսիսային Ամերիկայէն Վաչէ Արք. Յովսէփեան:

**Video of Election and Installation of Catholicos Karekin I is available at the Prelacy Bookstore**  
2 hours and 45 minutes.  
To order: Send \$25 plus \$3 for shipping and handling to  
Armenian Prelacy Bookstore  
138 East 39th Street, New York, NY 10016